Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 դեկտեմբերի 2007 թ.)

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, հԱրցախ և ի Սփյուռս.

Նոր տարվա սեմին հուսառատ սրտով ողջունում ենք ձեզ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից աստվածային լույս և օրհնություն բերում ձեր հոգիներին, ընտանեկան ձեր հարկերին:

Սուրբ Ծննդյան հոգենորոգ խորհրդով նոր տարի է սկսվում, որը դիմավորում ենք նոր բարի հույսերով՝ մտքով ու աղոթքով լինելով նաև հեռվում գտնվող մեր սիրելիների հետ:

Գոհության մաղթանք ենք բարձրացնում երկինք, որ անցնող տարում Աստծո օրհնությամբ խաղաղության մեջ բարի արդյունքներ արձանագրեցինք հոգևոր և ազգային մեր կյանքում: Հայաստանում և Արցախում շարունակական եղան տնտեսական, ընկերային կյանքի ձեռքբերումներն ու հաջողությունները, հոգևոր-եկեղեցական մեր կյանքի, մշակույթի, կրթության ու գիտության ասպարեզներում դրական զարգացումներն ու առաջընթացը: Պետական ծրագրերով, բարերարների ներդրումներով, մեր ժողովրդի համատեղ ջանքերով վերականգնվեցին բնակավայրեր, կառուցվեցին ու նորոգվեցին եկեղեցիներ, դպրոցներ, առողջապահական, մշակութային հաստատություններ: Անցնող տարում մեր կյանքին քաջալերություն բերեցին նաև Հայրենիքի և Սփյուռքի զորացող կապերը բազմաթիվ ասպարեզներում, որոնք ծառայում են հայապահպանության և մեր ժողովրդի միասնական կյանքը կառուցելու կարևոր նպատակին: Տարին նշանակալի էր ազգային մեր արդար դատի պաշտպանության նախաձեռնություններով և քայլերով: Հավատն ունենք, որ շուտով հաղթանակած պիտի տեսնենք Արցախի ազատ ապրելու իրավունքը, Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչումը, որը կլինի մարդկության կամքի արտահայտությունը՝ կառուցելու բռնություններից զերծ, ապահով ու արդար աշխարհ:

Հիրավի, սիրելի ժողովուրդ, թեև տակավին առկա են հոգսեր, մտահոգություններ, խնդիրներ ու դժվարություններ, լավատեսության ոգով ենք դիմավորում նոր տարին, նաև՝ մեր ազգային նպատակների իրագործման վճռականությամբ: Տիրոջ օրհնությամբ և նվիրյալ ջանքերով աշխարհսփյուռ մեր զավակների պիտի շարունակենք կերտել և շենացնել մեր ժողովրդի բարօր ու պայծառ կյանքը Հայրենիքում և Սփյուռքում՝ որպես վկայություն առ Հայրենին սիրո, մեր հավատքի և աստվածսիրության:

Մեր երկրի զորացման ու առաջընթացի ճանապարհին կարևոր հանգրվան են նախագահական ընտրությունները 2008 թվականին: Առ Աստված ապավինությամբ մասնակցենք առաջիկա ընտրություններին: Ապրենք ու գործենք հավատքով, և առավել բարգավաճ երկիր, բարեբեր ու կենսունակ հասարակական կյանք կառուցելու

մեր հույսերը ավելիով են արդյունավորվելու, քանզի «Տիրոջ օրհնությունն է բարեպաշտների վարձը, և Նրա օրհնությունը խնդություն է տալու նրանց»:

Տարեմուտի այս պահին մեր աղոթքով ու մաղթանքով լինենք նաև նեղյալների ու կարոտյալների, պատերազմների պատճառած վիշտն ու դժվարությունները կրողների հետ, մեր Հայրենիքի սահմանները պաշտպանող Հայոց բանակի քաջարի մարտիկների հետ, և բոլորի, ովքեր այս պահին տարեմուտը դիմավորում են իրենց ծառայության մեջ: Թող մեր Տիրոջ փրկարար շնորհները արգասավորվեն աշխարհում նոր տարվա հետ, և թող խաղաղությունը, սերն ու ողորմությունն Աստծո լինեն միշտ մեզ հետ և բոլորի: Ամեն:

Շնորհավոր Նոր Տարի: